ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

06 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Անուշ Բաղդասարյանը, Արմեն Գրիգորյանը, Արմեն Դավթյանը, Հայկ Մարիկյանը, Մարտուն Մարտիրոսյանը, Սյուզաննա Նազարյանը, Աղունիկ Նալբանդյանը, Արթուր Պապյանը, Արմեն Ջուլհակյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> Արսեն Հարությունյան, Գևորգ Մանուկյան, Սամվել Անտոնյան, Արթուր Սավթալյան, Լուսինե Հովհաննիսյան, Լևոն Քալանթարյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Գայանե Ղալաչյան, Մարիամ Մանուկյան, աշխատակիցներ, ՀՈԱԿ-ների տնօրեններ

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Հրահատ Աբրահամյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50-Ա)*

Նիստը վարողը՝ Հ.Աբրահամյանը, խնդրեց որ ելույթի խոսք է խնդրում տեր Մամբրեն:Լսեն իրեն, որից հետո կշարունակեն օրակարգային հարցերի քննարկումը:

Տեր Մամբրե քահանան ողջունեց բոլորին, շնորհակալություն հայտնեց հանդիպման հնարավորություն ընձեռնելու համար և օրհնանք հղեց ներկաներին:Նշեց, որ նախորդ տարի Ստեփանավանի Սուրբ Սարգիս եկեղեցուն հատկացվել է գումար՝ տարբեր եկեղեցական գործառույթներն աջակցելու նպատակով:Տեր հայրը մանրամասնեց, որ կատարվել է բարեկարգման աշխատանքներ Սվերդլով գյուղի տարածքում գնտվող Դորբադավանքում: Նշեց, որ համայնքապետարանի աջակցությունը այս առումով շատ օգնել է և խնդրեց այս տարի ևս գումար հատկացվի, քանի որ նախատեսվում է իրականացնել Սուրբ Նշան մատուռի վերանորոգման աշխատանքներ:

Ավագանու բոլոր անդամները կողմ էին գումար հատկացնելուն: 2025թ. բյուջեում արդեն հաստատված էր այդ հատկացումը:

Անցան օրակարգի հաջորդ հարցին:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱՋՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«MERSI PROJECTS» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Ստեփանավան համայնքի ավագանուն է դիմել «Mersi Projects» հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչ Վիկտորյա Ավետիքի Ղազարյանը ով կազմակերպում է բազմազավակ, անապահով կամ նպաստառու ընտանիքի երեխաների, արցախյան պատերազմում մասնակցած անձանց հարազատների, բռնի տեղահանվածների (թվով 22 երեխա) հանգիստը Վրաստանի Հանրապետության Քոբուլեթի քաղաքում՝ «Բարեկամություն» խորագրով: «Mersi Projects» հասարակական կազմակերպության խնդրանքն է համայնքապետարանը հոգա քսաներկու երեխաների ճանապարհածախսը: Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետը՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Բավարարել «Mersi Projects» հասարակական կազմակերպության խնդրանքը և համայնքի բյուջեից «Mersi Projects» ՀԿ-ին նվիրատվություն կատարել քսաներկու երեխաների ճանապարհածախսի համար 450000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում «Mersi Projects» հասարակական կազմակերպությանը վճարել հատկացված գումարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀԱՄՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի վեցերորդ նիստի գումարման օր սահմանել 25.06.2025թ. ժամը 14.30 ին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 53-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ
ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ
ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ
ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՎԱՆՈ ՀԱԿՈԲՅԱՆ
ԼԻԼԻԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մովսիսյանը

_____